

առաջ ու սրբության մաս ընտանապէս զիշմէշի և մատուցիչ առաջ ու ձեռք օգն ու զարդ պահանջող մատառիկաց

ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ

առաջ ու բարեփառ ձեռք լավություն ու զատուք մնամուն
ամանցած մասնաւուն մատուցության մատառանոտ մատուցության
առաջ ԶԱՐԱԲԹՁՀԻՆՈՒԱՃՄԱՆ ՀԱՐԻԿԻՐԱՄԵԱԿԻ^{*}) առաջ ու առ
ամա պահանջության մատուցության մատառանոտ մատուցության
առաջ (1813 թ. 12 հոկտ. — 1913 թ. 12 հոկտ.)

Պետրոս Մեծի վերջին պատասխանը չատ էր ապդել հայ մելլիքների, ժանաւանդ և սայի կաթողիկոսի վրայ Նրանք այլոս
ուռաց կողմից յայս չէին տեսնում, մնացել էին մեն-մենակը Մա-
նաւանդ երբ մնանում է Պետրոս Մեծը (1725 թ. յուն. 28-ին) և
ուռաց քաղաքականութիւնը փոխում է, Նրանք յոյնները կարում
են ուռաներից, թէեւոչ ամրողովին Ամենից շատ այս հանգամանքն
աղջում է և սայի կաթողիկոսի վրայ, որ ամրոջ գործի ոգին էր
և ուռաների վերաբերմամբ մնձ յոյսերը ակնկալութիւններ ուներ
նա այժմ իրեն յուսախարուած էր զգում և, քատ երեսիթիւն, կմկդից
զիրեկման իջաւ (1728 թ.)։ Բայց նրա սիրած գործը շարօնակե-
ցին հայ մելլիքները Նրանք յոյնները չէին կորցրել, նորից զիմում-
ներ են անում, պատգամաւորութիւն են ուզարկում ոսւսաց ար-
քունիքը և օգնութիւն հայցում, թէի իզնուր Խուսաց կառավարու-
թիւնը Պետրոս Մեծից յատոյ փոխում է իւր քաղաքականութիւնը,
արևելքի զործերով չէ հետաքրքրուում և նոյնիսկ Խէշտի գայինքով
Պարսկաստանին յետ է տալիս Աստրաբատի և Մազմանդարանի նա-
հանգները; Բնական է, որ այսպիսի հանգամանքներում հայոց ազերս-
ները իզուր պէտք է անցնէին; Միւս կողմից զարսկական պէտու-
թիւնը Նադր Շահի հանգէս գալով խիստ ուժեղանում է, իսկ այս էլ
անորոշ ժամանակում մելլիքներին յետ է կասեցնում իրենց ապօ-
տամրական մտագրութիւնից; Այսպիսով ազատասիրական շարժումը
մի ժամանակ դադարում է, բայց ապագայում աւելի ուժեղ չափով
հանդէս գալու յուսով։

Նադր-Շահի օրով պարսկական քայլայուած պետութիւնը նո-
րից յանկարծակի անսպասելիօրէն հզօրանում է; Կարճ ժամանակում
օսմանցիք վրնդուում են պարսկական հողերից, ուռաները վերա-
դարձնում են Պետրոս Մեծի պարսից խած երկրներից մնացածնե-
րը, պարսկական զօրքը նուաճում է նոյնիսկ Ղանգանարը, Սամար-
զանդը, Բուխարան; Խիվան; Այսպիսի մի ոյժի հանդէս, ընական է,
որ հայ մելլիքները պէտք է լուին և ամեն կերպ ծածկէին իրենց

*) Տես «Արարատ» փետրուար 1914 թ.

նախկին դործունէութիւնը, Նաղը Շահը մի առանձին սիրալիքութիւն է ցոյց տալիս դէպի հայերը, դէպի կաթուզիկոսը և մելիք-ները Մելիքներից մի քանիսին առանձին պատիւների է արժանացնում, իսկ միւսներին էլ հասաւուում է իրենց իրաւունքների մէջ, Նաղը-Շահի հանդէս գալով շարժարում, վերջանում է Ղարաբաղի քաղաքական շարժման առաջին շրջանը, որը մօտաւորապէս 5/4 գար է ընդգրկում (1618—1747)։

Նաղը-Շահի կառավարութիւնը երկար չէ տևում և առ 1747 թ. սպանում է զաւադիքների ձեռքով։ Երա մահուամբ Պարսկաստանում նորից տիրում է շփոթը, պետութիւնը թուլանում է։ Պարսից գահի շուրջն սկիզբն է առնում մի կատաղի կոմիտ, որը տիեզէ մօտ 34 տարի, մինչև Ղաջարների հարատւթեան հաստատուելը։ Միւս կողմից Ռուսաստանում գահ բարձրանալով Եկատերինա II կայորուհին (1762 թ.), ոռւսաց արևելեան քաղաքականութիւնը վերակենդանանում է։ Տաճկական պետութիւնն էլ երերակ էր սկսել եղիպառը, Միջագետքն անկախութեան փորձեր էին անում, ոռւսներն էլ մի կողմից էին նեղում։ Ահա այս հանգամանքները Ղարաբաղի հայերի մէջ նորից արթնացնում են ազատութեան յոյսեր։ Եւ սկսում է Ղարաբաղի քաղաքական շարժման երկրորդ շրջանը։ Այս անգամ ազատական շարժման մասնակցում է միմիայն Ղարաբաղը, Սիւնիքը Դաւիթ բէկի մահուանից յետոյ այլիս չէ շարժում։ Քաղաքական շարժումն առաջ են տանում Ղարաբաղի հինգ մելիքները, իսկ կենտրոնը դարձեալ Գանձասարի վանքն է։ Էջմիածնի կաթուզիկոսութիւնը, որ առաջին շրջանում սառնութեամբ, վախով էր վերաբերուել այս շարժման, երկրորդ շրջանում նոյնպէս միանում է։

Ղարաբաղի մելիքները գարձեալ յոյսները սուսների վրայ են դրել, նրանցից են սպասում օգնութիւն և եւ նրանք չեին սխալում, միակ պետութիւնը, որ ամենից շատ շահագրգուած էր Անդրկովկասով, այդ սուսականն էր։ Պետրոս Մեծի ժամանակը Ռուսաստանը դեռ այնքան միջոցներ չունէր, կլանուած էր ներքին բարենորոգութեամբ և հրւախային գործերով։ Եւ նա չէր կարող արենլեան քաղաքականութեան մէջ մեծ չափով հանդէս գալ։ Այլ էր XVIII դ. վերջին քառորդումն Եկատերինա II-ի օրով առաջին տեղը բռնում է արևելեան քաղաքականութիւնը, Տաճկաստանի տկարագումը։ Մանաւանդ որ Եւրոպայի քաղաքական պայմանները այդ թոյլ էին տալիս Ռուսական արևելեան քաղաքականութեան կանդանալը նորից միծ յոյսեր է զարթեցնում կովկասեան քրիստոնեաների մէջ։ Ռուսների կողմից թուուցիկներ, թղթեր, կոչեր են ցըւում Անդրկովկասական քրիստոնեաների մէջ, որոնցով հրաւէր էին կարդում

պատրաստուել ապստամբուելու, միանալու ռուս գօրքին, որ շուտով
պէսք է երեայ:

Նադր-Շահի մահուամբ առաջացած շփոթից անմաս չէ մնում
և Ղարաբաղը: Ղարաբաղը, որ մինչ այդ զուտ հայկական երկիր
էր, մահմեղական-թուրք ազգաբնակութիւն չունէր, չուտով ներ-
սում ունեցաւ մահմեղական մի իշխանութիւն: Ղարաբաղի տէրերն
էին ի վաղուց հինգ մելիքները, Նրանցից բացի օտար իշխանութիւն
չկար: Այդ մելիքների դաշնակցութիւնն ամեն կերպ դէմ էր գնում
Ղարաբաղում մահմեղական իշխանութեան առաջանալուն: Բայց
մելիքների մէջ ներքին գժուութիւններ ընկնելով, դաշնակցութիւնը
քայլայուելով, դուռ է բացւում մահմեղական տիրապետութեան
Ղարաբաղում: Կուր գետի աջ եղերքում գտնւող աւագուներում
ապրում էր թափառական-խաչնարած թուրքական մի ժողովուրդ
Զուանչիքցիներ անունով: Սրանք աւելագակարարոյ լինելով, Նադր-
Շահը դադթեցրել էր Խորասանի Բայց շահի մահուանից յետոյ սրանք
վերապատճեւմ են նորից իրենց նախկին բնակատեղին: Այս Զուան-
չիքցիների զլուխն է անցնում Փանահ անունով մէկը, որը երկար
ժամանակ ծառայել էր Պարսկաստանում: Զուանչիքցիների տրա-
մադրութեան տակ զանւում էին կուր գետի աջ ափերի տափա-
րակները, որոնք դարձնան սկզբից այս բնակութեան համար ան-
յարմար էին մինչև աշուն: Զուանչիքցիները այդ ժամանակ չուում
էին Ղարաբաղի լեռները և որոշ վարձով կամ բանութեամբ մնում
մինչև աշուն: Բայց այս թափառումը մեծամիծ բարգութիւնների
հետ էր կապուած: Փանահը աշխատում է Ղարաբաղում մի ամ-
բութիւն ճեռք բերել, որից յետոյ հեշտ կլինի հետզհետէ հողեր
զրաւելիք նա մի քանի տեղեր փորձում է բերդ կառուցանել, բայց
ամենուրեք հանդիպում է հայ մելիքների միահամուս ընդդմա-
դրութեան: Բայց չուտով հայ մելիքների ներքին երկապառակութիւնը
հեշտացնում է նրա գործը: Վարանդայի Մելիք-Շահնազարհան
Մելիք-Յուսէինի մահուանից յետոյ մի առժամանակ մելիքութիւնը
կառավարում է նրա աղդական Մելիք-Միքարէկ Բ-ը: Բայց Շահը
սրան իւր յանդնութեան համար պլատել է տալիս և փոխարէնը
մելիք է նախակում Մելիք-Յուսէինի որդի Մելիք Յովսէփին: Սա
ուներ մի եղբայր Մելիք-Շահնազար անունով, որ չափազանց փա-
ռասէր էր և ձգուում էր Վարանդայի մելիքութեան տիրանալ: Մելիք-
Շահնազարը իւր ընտանեկան կեանքում շատ անբարոյական էր,
մողուլ էր բազմակնութիւն, որով իրեն հետ թշնամացրել էր միւս
մելիքներին՝ կանանց կողմից նրանց ազգական լինելով, միւս կող-
մից իւր դէմ զրգուել էր և ժողովրդին: Իսկ յետոյ սպանելով եղ-
բօրը, Մելիք-Յովսէփին և Վարանդայի մելիքութեան տիրանալով,
մոլորովին թշնամացնում է չորս մելիքներին իւր դէմ: Եւ այստե-

զից սկսում է երկագառակութիւնը վարանդայի և միւս մելիքութիւնների մէջ։ Այս բանից օգտաւում է Փանահը, որը արդէն կաշորով ստացել էր խանութեան տիտղոս։ Նա մօտենում է Մելիք-Շահնազարին։ Փանահ խանի երազը հետզհետէ իրականացաւ, նա Մելիք-Շահնազարից նույն է ստանում նրա Շուշի բերդը, որը մեռիքը կառուցել էր նոյն Փանահ խանի խորհրդով (1752 թ.)։ Այսպէս առաջանում է Մելիք-Շահնազարի և Փանահ խանի մէջ մի զինակացութիւն ընդէւ չորս միացեալ մելիքների։ Սկսում է մի մենամարտութիւն այդ երկու կողմերի մէջ, որը երկար տարիներ վրադովում է Ղարաբաղի խաղաղութիւնը և վերջն էլ քայլայում հայ ժողովրդեան։

Փանահ խանի հետզհետէ ընդարձակում է իւր իշխանութիւնը, բացի Զուանչիրցիներից, նրան ենթարկում են և այլեալ թուրքական թափառական ցեղեր, բայց սեփական հողեր թէ ինքը (բացի Շուշուայ բերդից) և թէ իւրայինները Ղարաբաղում ոչինչ չունէին։ Փանահ խանի ծրագիրն էր նախ մելիքներին տկարացնել, իւր ազգեցութեան տակ ձգել նրան յաջողուում է դաւադրութեամբ վերջ տալ Խաչէնի Հասան-Ջալալեան մելիքներին, նրանց տեղ կարգելով իւր ցանկացած մարդկանց, Մնացեալ երեք մելիքութիւնները թէն միացած ոյժերով կռւում են Փանահ խանի և Ղարանդայի մելիքի գէմ, բայց իւրարից աշխարհագրական տեսակէտից բաժանուած լինելով և թշնամին արանքում գտնուելով (Տիգակը հեռու էր Զրաբերդից և Գիւլստանից), նրանց չէ յաջողուում յաղթահարել թշնամուն։ Մի քանի անգամ մելիքները պարտութիւն են պատճառ ուում Փանահ խանին և նրա դաշնակցին։ Բայց յետոյ գերակշռութիւնն անցնում է հակառակորդների կողմը, Զրաբերդի և Գիւլստանի մելիքները ստիպուած են լինուում վախչէլ Գանձակ և ապաւինել այնտեղի խանին, որը բարեկամ էր հայ մելիքներին։ Գանձակի Շահներդի խանը Փանահ խանի հետ հաշտեցնում է այդ մելիքներին և սրանք հայրենիք են վերադառնում։ Այդ հաշտութիւնը շարունակուում է մինչև Փանահ խանի մահը (1858 թ.)։

Փանահ խանին յաջորդում է նրա որդին՝ Իբրահիմ խանը, որի օրով Շուշուայ խանութիւնը ընդարձակուում է և վերջում էլ վերածուած Ղարաբաղի ընդարձակ խանութիւնան։ Իբրահիմ խանը հայ մելիքների վերաբերմամբ իւր դաժանութիւններով և խարգախութիւններով հօրից գերազանցեց։ Նա շատ չուած դրժեց հօր՝ մելիք ներին տուած խոստումը և սկսեց նրանց գէմ գործել։ Աա դաւաճանութեամբ սպանել է տալիս Զրաբերդի մելիքին և նրա մելիքութիւնը յանձնում իրեն կողմնակից մէկին։ Միւս մելիքները Փակուում են իրենց բերդերում և պատգամաւոր ուղարկում Շուսաց արքունիքն՝ օգնութիւն հայցելու, Մելիքների խնդիրը յանձնուում է

Պատեմկինին քննելու Արգեն դրանից առաջ Ռուսաց քաղաքական շրջաններում սրոշներ էին ուշազրութիւն գարձնել Անդրկովկասի քրիստոնեաների վրայ:

Եկատերինայի յայտնի քաղաքական գործիչներից մէկը և "Երեխին Գրիգորի Ալեքսանդրովիչ Պատեօմկինը հայական ծրագիր-ներ ուներ, Յայտնի է նրա «Յունական պրօնկար», որը կայանում էր Տաճկաստանի վերացման և մի խոշոր յունական պետութիւն հիմնելու մէջ: Այդ պետութեան մայրաքաղաքը պէտք է լինէր Կ. Պոլիսը, և պետութիւնն էլ ուսւաց հովանաւորութեան տակ: Միւս կողմից ուսւաց քաղաքականութիւնը կամենում էր Կասպից ծովեղբարը ու ամբողջովին գրաւել, իսկ այստեղ նոյնպէս պէտք էր սահպատճել քրիստոնէական պետութիւններ՝ որպէս հակակշիռ պարսից և տաճկաց պետութիւններին: Սկզբում ի նկատի ունէին ստեղծել երկու այդպիսի պետութիւն՝ մէկը վրացական, միւսը հայկական: Նախ բանակցութիւնները վարում են վրաց հետո Պատեօմկինը, որ նշանակուել էր հարաւային Ռուսաստանի կառավարիչ, մօտիկ յարարերութեան մէջ է մտնում վրաց Հերակլ թագաւորի հետ: Երա ազգական գեներալ Պատեօմկինի, որ Կովկասի կառավարիչն էր, և վրաց Հերակլ թագաւորի միջն կնքում է դաշինք: որով վրաստանը ուսւաց գերիշխանութեան տակ է մտնում (Գէորգիոսկի դաշինքը 1783 թ.): Հերթը համում է հայերին: Հայ մելիքները, որ քանիցս դիմումներ էին արել ուսւաց, այժմ ուշազրութեան են արժանանում: Մելիքների և Ռուսաց կառավարութեան մէջ միջնորդ է հանդիսանում: Ռուսանայոց առաջնորդ Յովակի արքեպ, Արզութեանը: Այս նշանաւոր հոգենորականը այնպիսի մի դիրք էր ստեղծել իւր համար, որ ուսւաց արևելեան քաղաքականութեան մէջ նրա խորհրդին էին դիմում շատ դէպքերում, մանաւանդ նրան մօտ էր ինքը Պատեօմկինը: Այս տեսակ մի միջնորդ ունէին հայ մելիքները, որը նրանց համար բաւական եռանգուն կերպով աշխատում էր Պատեօմկինը Մրզութեանի միջնորդ մանրամասն ծանօթանում է հայ մելիքների ընդհանուր կացութեան հետ և կաղմում է նրանց անկախութեան մի պրօնկատը Շրագրուած էր Ղարաբաղի Իբրահիմ խանին գահընկեց անել, Ղարաբաղից մի պետութիւն կազմել, այդ յանձնել ականաւոր մելիքներից մէկին կառավարել, (Այդ պետութիւնը պէտք է միմիայն Ռուսաստանից կախումն ունենայ: Նա պէտք է իւր կազմութեամբ օրինակ հանդիսանայ և հայկական միւս մասերի ազգաբնակութեան մէջ նոյնպէս ձգում առաջացնէր՝ յարուել դէպի ուսւաց: Այս պրօնկարը կայսրունու կողմից հաւանութիւն է գտնում: Կայսրունու անունից Արզութեան արքեպ, յանձնարարուում է յայտնել հայ մելիքներին որ նրանց խնդիրներն ուշազրութեան առնուեցին, պատրաստ լի-

նեն, չուտով ոռուսաց զօրքը կ'ուղարկուի Այս հաղորդութիւնը ուղարկուում է Գանձաւարի վանքը, ժամանակի Յովհաննէս կաթոլիկոսն իսկոյն շտապում է ժողով հրաւիրելու Հաւաբեռում ևն Զրաբերդի, Գիւլուտանի, Դիզակի մելիքները, հոգեորականութիւնը և ժողովրդի գլխաւորները թղթերը կարդացւում են, որից յետոյ ներկայ եղողները յայնում են իրենց հպատակութիւնը և խաչի վրայ երլում ևն հաւատարիմ մնալ: 1783 թ. գրւում է մի խողիք Գանձաւարի ժողովի կողմից, որի մէջ Ղարաբաղի հնա միացած է և Ղարադաղը, խողիքն ստորագրում են Յովհաննէս կաթուղիկոսը, և եպիսկոպոս և ճ. մելիքները: Շուտով Պատեօմիքնը հրամայում է Կովկասի կառավարիչ գներալ Պատեօմիքնին պաշտօնանկ անել Շուշու խանին և Ղարաբաղում հայկական իշխանութիւն հիմնել Իրահիմ խանն այս րուսի մասին տեղեկանալով և կամենալով զրա տուացն առնել, ինքն էլ իւր կողմից դիմում է Պատեօմիքնին և ինզրում իւր խանութիւնը ուռաց հպատակութեան տակ առնել: Պատեօմիքնը թէև հաստատ պատասխան չէ տալիս խանին, բայց տրամադրիր էր նրա խողիքը յարգել, միայն ուղղում է այնպէս անել, որ հայերը չդժգոննեն: Իրրահիմ խանը բաւարար պատասխան չըստ առաջարկ և Նկատելով, որ Խուսաց արշաւանք է պատրաստում, որին պէտք է միանան և հայերը, նա չուտով Շուշի երդը ամրացնում է և ապա իւր բարկութիւնը, վրէմը թափում է հայերի գլխին նա խարէ ութեամբ իւր մօս է հրաւիրում Ղարաբաղի իրկը նշանաւոր մելիքներին, որոնցից երկուսին (Մելիք-Մեժլումին և Մելիք-Արովին) բանտարկուում է, իսկ երրորդին (Մելիք-Բախտամին) Պարսկաստան է աքանքութիւնը: Վարչութիւնը կողովուում են Գանձաւարի վանքը: Կաթուղիկոսին իւր ազգականներով քերում Շուշում բանտարկուում են: Շուտով բանտում Յովհաննէս կաթուղիկոսը խանի հրամանով թունաւորում է և մեռնում (1786): Յովհանի Արդութեան արքական շատ է աշխատում ոռւսներին շարժել, մելիքներին օգնութիւն հասցնել բայց չի յաջողուում: Մելիք-Մեժլումը և Մելիք-Արովը մի հարքով բանտից փախչում են, բայց ապահով չեին: Երբ սուսաց կառավարութիւնը 1787 թ. վրաց Հերակլ թաղաւորին ոռու զօրքով և վրացի գնդերով հրամանագրում է արշաւակ Գանձակի վրայ, այդ զօրքի մի մասն էլ ուղարկուում է Իրրահիմ խանի դէմ Երկու մելիքները միանում են այդ զօրքին, և Իրրահիմ խանի ոյժերը խորակուում են: Բայց յանկարծ Խուսա-տաճկական պատերազմը ուղարկուում է արշաւակ աման իրիքու և Մելիքները ստիպուած են լինում ոռւսների հետ հնաւանալ իրենց երիքից: Երանք հետները կարողանում են տանել ընդամենը 500 բնաւանիք, որոնց բնակեցնուում են թիֆլիզի և Գանձաւակի միջև Շամքօսում: Երանց հպատակներից մօս 7000 տուն մնացին:

Իրրահիմ խանի ձեռքում խանը գրաւեց այդ փախստական մելիքաների կամքերը և կալուածները, Մելիքների հեռանալով, համարեաթէ Ղարաբաղում վերջանում են հայկական անկախութեան, այդ բնիորները Մելիքներն ապաւինում են Գանձակի խանին, որից իրրահիմ խանը պահանջում է իրեն յանձնել փախստականներին, բայց նա մերժում է: Աղա-Մահմէդ խանի հանդէս գալով, իրրահիմ խանը մի առժամանակ հանդիսաւ է թողնում հայ մելիքներին:

Աղա-Մահմէդ խանը ամրապնդելով իւր գահը Պարսկաստանում, 1795 թ., արշաւում է դէպի Անդրկովկաս պատժելու վրացիներին, որոնք ոռւսաց հովանաւորութեան տակ էին մտել և պարսկական խաներին, որոնք անհնազանդ էին Երևանի խանութեան տիրանալուց յետոյ, անցնում է Ղարաբաղ և Շուշին պաշարում: Բայց չկարողանալով առնել, անցնում է դէպի Թիֆլիզ և քաղաքն աւերում: Խուռաներն այս լուրն առնելով, նորից զօրք են ուղարկում Վրաստան, և որոշում է պարսից դէմ մի արշաւանք սկսել: Այդ ժամանակ այլևս չկար իշխան Պատեօմկինը, գործերը վարում էր Պատօն Ալեքսանդրովիչ Զուրովը: Սա նոյնպէս հակայական մի ծրագիր ունէր, բայց առաջին տեղը բանում էր պարսից դէմ արշաւելու Այս արշաւանքը յանձնուում է Վալերեան Զուրովին: Պէտք էր նախ Հերակլին հաստատել իւր թագաւորութեան մէջ, հայ մելիքութիւնները ոռւսաց հովանաւորութեան տակ առնել և գրաւել հայոց կաթուղիկոսներին: Յովսէփ արքեաք, այս գործում պէտք է մամնակցութիւն, ոյոյ տարի Շուռով սկսում է այդ արշաւանքը, ոռւսաց զօրքը գրաւում է Գանձակի, Շուշուայ, Շէքիի, Շիրվանի և այլ խանութիւնները: Յովսէփ արքեաք, զանգերով մի քանի խաներ յօժարակամ հապատակում են, արիւն չի թափւում: Բայց Եկատերինա Բ, կայսրուհին մեռնելով (1796 թ.), և զա՞ բարձրանալով Պաւել I կայսրը, ոռւսաց զօրքը յեա է կանչւում: Նորից հայերը մատնուում են խաների և առասարակ թուրքերի վրիժառութեան¹⁾:

Աղա Մահմէդ խանը ոռւսաց այդ նահանջը բացատրում և յայտարում է իրենից վախենալով և երկրորդ արշաւանք է ձեռնարկում: Շուշին առնում է, բայց Իրրահիմ խանը վաղօրօք փախել էր իւր փեսայի մօտ Դադեսանի կողմէրը: Բայց շուտով Աղա Մահմէդ խանը սպանուում է Շուշում (1797 թ.): Այս արշաւանքին հետեւում է սով, ժանտափատ (1798), որոնք ահազին կոտորածներ են անում, գաղթականութիւններ առաջացնում: Իրրահիմ խանը նորից վերադառնում է իւր խանութիւնը և սկսում իւր խստութիւն-

1) Եկատերինայի շրջանի վերաբերեալ տեղեկութիւնները բաղել եմ պիտորապէս Բուտկովից (Бутковъ. Н. Г. Матеріалы для новой истории Кавказа. часть 2-ая 1869 г.).

Ները հայերի վերաբերմամբ Գիւլիստանի Մելիք-Արովը և Զրաբերդի Մելիք Մեֆուռմը կորցնելով ամեն ինչ, փախչում են զէպի վլաստան։ Վերջինը իւր հետեւորդներով բնակում է Գանձակում։ Մելիքները իրենց յայսերը չեն կտրում, նորից ուղում են ուսաց զիմեր, Վարանդայի Մելիք Զումշուղը, Գիւլիստանի Մելիք Սբովը և Մելիք Փրիդոնը գնում են Պետերուրդը Պաւել I կայսեր ներակայանալու (1799թ.)։ Նրանք կայսրից խնդրում են 1. Ղարաբաղն առնել իւր հովանաւորութեան տակ, որով ցրուած ազգաբնակութիւնը նորից կժողովուի։ Հողը պատկանում է իրենց մելիքներին, իսկ Խրահիմ խանը և նրա նախորդը յափշտակող են։ 2. Եթէ այս հնարաւոր չէ, տալ 12 հազար առևսական զօրք, որ կարողանան նրա պաշտպանութեան տակ իրենց հպատակներին գաղթեցնել Ռուսաստան։ Բնակութեան տեղ են խնդրում Եկատերինուդարի մասերքը։ Մելիքների հայւով նրանց հպատակ ընտանիքների թիւը մօտ 20000 է։ 3. Իսկ եթէ այս էլ հնարաւոր չէ, մելիքներին չնորհել Ղազախը, որ առաջ էլ հայ ազգաբնակութիւն է ունեցել։ Պաւել I կայսրը յարգում է մելիքների վերջին խնդիրը։ Նրանց տրում է Ղազախը բնակութեան տեղ։ Մելիք Զումշուղը (Վարանդայի) ստացաւ Լօսին և Յօրչալուի մի մասը, Մելիք Ֆրէջունը՝ (Գիւլիստանի) ստացաւ Յօրչալուի մնացած մասը և Աղջա-Ղալան, իսկ Մելիք-Արովը (Կրկրորդի հօրեղբայրը) ստացաւ Յօլինիսը։ Արանցից իւրաքանչիւրը իւր հետ գաղթեցրեց իւր հպատակ հայերին, սրանով դատարկելով Ղարաբաղը բնիկներից և գերեզման փորեկով իրենց իշխանութեան։ Ղարաբաղի մելիքները խոշոր սիալ գործեցին՝ զիւմելով այս միջոցին Այլես գժուար էր ձեռք բերել իրենց նախկին իրաւունքները, մինույն ժամանակ երկիրը դատարկելով ընակիչներից, հնարաւորութիւն տուին մահմեդական տարրերին հաստատուելու Ղարաբաղում Այսպէս բաւական տիսուր վախճան ունեցաւ Ղարաբաղի քաղաքական շարժումը։

Վրաստանը միացուելով ուռաց պետութեան (1801թ.), Ռուսաստանը սահմանակից զարձաւ մահմեդական մի շարք խանութիւնների, Այնուհետեւ ուռաց Կովկասեան կառավարիչների վրայ պարտականութիւն է գրում հետզնետէ գրաւել, նուածել այդ խանութիւնները։ Ցիցիանովի Վրաստանի կառավարիչ նշանակուելով, ուռաց ազգեցութիւնը ինչպէս Վրաստանում, նոյնպէս և չրջակայ մահմեդական խանութիւնների վրայ ուժեղանում է։ Ցիցիանովը մտադրում է նախ՝ տիրել Բագուրի խանութեան, ի նկատի առնելով նրա կարեռը նաւահանգիստը և թէ Վրաստանի սահմանների ամբողջացումը։ Ապա պէտք է տիրել և Գանձակի խանութեան։ որը ընկնում է ճանապարհի վրայ, իսկ վերջն էլ երեանի խանութիւնը նուածել նրան յաջողութեամ է ուախ Գանձակի խանութիւնը գրաւել

Գանձակի Զաւարդ խանը Ցիցիանովի Վրաստան գալուց՝ բանկութիւն էր յայտնել ոռւսաց հովանաւորութեան տակ մանել, բայց խոստացած պատանդները չէր ուղարկում և երկդիմի գիրք էր բանել ըստ երեսյթին դադանի կերպով բանակցում էր պարսից շահի հետ իմանի այս դիրքը պատրուակ բանելով Ցիցիանովը արշաւում է Գանձակի խանի վրայ: Զաւարդ խանը քաջարար պաշտպանում է Գանձակը, բայց առևները պաշարմար Գանձակն առնում են (1804 թ. 3 յունուարի): Ծուսների տիրապետութեան տակն է ընկուտմ այժմեան Գանձակի գաւառը Այժմ Ցիցիանովը որոշում է Երևանի խանի վրայ արշաւել: Պարսկաստանը ի հարկէ լուռ մնալ չէր կարող Նրա ձեռքիդ բաւական չէ որ գնացել էին Վրաստանը, այլ և մահմեդական խանութիւններին նոյնպէս սպառնում էր Ռուսաստանը: Ժամանակի պարսից շահը, Բարձրխան առնունով (որ շահ դառնալուց յետոյ կոչում է Փաթալի Շահ) վըճռում է պաշտպանել մահմեդական խանութիւնները և ոռւսներից խլել Վրաստանը: Նա թաւրիզում մեծ բանակ է կազմում և Դարարադի ու Երևանի խանութիւնների միջով արշաւում է առևաց վրայ: Ռուսաց գօրքը շարժում է Երևանի խանութեան վրայ, որովհետև Երևանի խանը միացել էր պարսից հետ Ռուսները ջարդում են պարսից զօրքը, նրան երկու մասի են բաժանում և Երևանն էլ պաշարում են Վերջն էլ նեղուելով պաշարի նեղութիւնից պաշարումը վիրցնում են և յետ դառնում: Այն ժամանակ Ցիցիանովն աշխատում է խաղաղութեամբ զրաւել խաներին: Դեռ Երևանի առշաւանքի ժամանակ նա յարաբերութեան մէջ էր մտել Դարարադի և Շէրիի խանների հետ՝ առաջարկելով ընդունել առևաց հպատակութիւնը: Դարարադի իրանիմ խանը, որ մեծապէս տուժել էր ԱղաՄանէդ խանի արշաւանքներից, թշնամացել էր պարսից հետ և միւս կողմից տեսնելով, որ սուսները վազ թէ ուշ պէտք է զրաւեն իւր խանութիւնը, կամեանալով փրկել իւր խանութիւնը, համաձայնութիւն է յայտնում: Բարձրխանը լսելով այդ, մարդ է ուղարկում իրրանիմ խանի մօտ, որ նրան յետ կանգնեցնէ սուսներից և խոստանում է բարեկամութիւն ու պարզները: Բայց Իրրանիմ խանը մերժում է այդ 1805 թ. գարնանը Իրրանիմ խանի և սուսաց ներկայացնեցի մէջ մի դաշն է կնքում, որով Իրրանիմ խանը հրաժարում է պարսից և այլ պետութիւններից կախումն ունենալ, ընդունում է առևաց հպատակութիւնը: Նա ըրջակայ խանների հետ առանց սուսաց զիքին ամեն զիւրութիւն պէտք է տայ, իսկ սուսաց պետութեան էլ ատրեսկան մի որոշ հարկ պէտք է վճարէ: Իսկ սուսաց կողմից խոստանում են միշտ ճանաչել իրրանիմ խանի և նոյա ժամանդներէ:

իշխանական իրաւունքները, կառավարութիւնը ամբողջովին թողարկում է նոյնը, և Շուշում պէտք է 500 հոգուց բազկացած մի ոռոսկան գօրագունդ պահուի քաղաքի պաշտպանութեան համար:

Քարախանը և մանաւանդ թափաժառանդ Արաս-Միրզան եռանդուն պատրաստութիւն են տեսնում երկրորդ անգամ արշաւելու Ռուսաց նոր գրաւած երկրների վրայի նախօրօք մարդիկ են ուղարկում ապստամբեցնելու իսաներին և ժաղավրդին սուսաց գէմ Պարսից առաջին բանակը Արաս-Միրզայի առաջնորդութեամբ մըտնում է Վարարազ Ռուսաց գօրքն այդտեղ շատ սակաւաթիւ էր, անրաւարար պաշտպանութեան համար Շուշին պաշարում էր, բայց պաշարուածները, զիթաւորապէս սուսաց զօրքը հերոսարար դիմաւ զրում է: Այդ ժամանակ Իրրահիմ խանը ոչ թէ միայն չէ հոգում երկրի պաշտպանութեան մասին, սուսաց չէ աջակցում, այլ նոյն իսկ գաղտնի բանակցութեան մէջ է մանում Արաս-Միրզայի հետ և դաւաճանում սուսացը Արաս-Միրզան բանակ էր զրել Շօշու զիւդի մօտ և պէտք է քաղաքը ոմբակուծէր: Մի զիշեր ծածուկ Իրրահիմ խանը իւր ընտանիքով զուրա է գալիս թերզից և զիմում է պարսից բանակը: Այդ բանը նկատում է Շուշում դտնեող սուսաց օգնող Վարանդայի մելիքը (Մելիք Զումչուզը), որը խալոյն յայտնում է սուսաց փոխ գնդապետ Լիսաննեիչին երկուսը միասին մի խումբ ձիաւորներով շտապ վրայ են համում, շրջապատում են Իրրահիմ խանին իւր չքախմրով և առաջարկում վերադառնալու Բայց ընդհարում է առաջ գալիս, որի ժամանակ Իրրահիմ խանը իւր ընտանիքով ոչնչանում է (1806թ.): Իրրահիմ խանի որդի Մեհտի խանը, որ մեացի էր Շուշում, միայն փրկւում է այդ կռատորածից Արաս-Միրզան Շուշին թողնում է և շտապում Գանձակը Նրա յետեցից զալիս է Բարախանը, նոյնպէս մեծ զօրքով Բայց Ցիցիանովին յաջորդում է Բարախանին զէպի Պարսկաստան քչեր առանց պատերազմի, իսկ Կարեեազինն էլ ջարդում է Արաս-Միրզայի զօրքը: Այսպիսով պարսից այս երկրորդ արշաւանքն էլ անյաջող է անցնում: 1)

Իրրահիմ խանի մահից յետոյ ոռուները խան են ճանաչում նրա որդի Մեհտի խանին: Կառավարութիւնն էլ մնում է նախսիկնը, միայն ոռուները որոշ հսկողութիւն պէտք է ունենան, այն էլ զինւորական թէ ինչիր տեղի ունեցան: Մեհտի խանի ժամանակ խանութեան ներքին վարչութեան մէջ, ոռուները որպիսի անփութութիւն ցոյց տուին եալն, այդ մասին կիսուալի աշխատութեան ու երկրորդ մասում, ուր կպարզուի մանրամասն սուսաց տիրապե-

1) Н. Дубровинъ. Закавказье. 1866 г., Утверждение русского властычества на Кавказѣ. т. II.

տութեան հետևանքներն, արդիւնքները Ղարաբաղի համար:

Ղարսից շահը և նրա որդին զեռ յոյսները չէին կորցրել, նորանոր պատրաստութիւններ են տեսնում Անգլիական կառավարութիւնն էլ իւր դեսպանի միջոցով մի կողմից էր գրգռում նրանց շարունակել պատերազմական գործողութիւնները. ուումների այս առաջախաղացումը նկատում էր Հնդկաստանին սպառնացող Մինչև 1813 թուականը առաջ այդ պատերազմները, պարսիկները շարունակ անշախողութեան են հանդիպում: 1812 թ. Նապօլէօնեան արշաւանքը նոր յոյսներ է գարթեցնում, բայց երբ Ռուսաստանը Նապօլէօնեան զօրքը ջարդում է, այս անգամ անգլիացիք իրենք էլ տեսնելով պարսից յամառութեան անմտութիւնը, խորհուրդ են տալիս շահին հաշտութիւն կնքել ուուաց հետո 1813 թ. հոկտեմբերի 12-ին կայանում է այդ հաշտութիւնը: Գանձակի և Ղարաբաղի խանութիւնների սահմանում գտնուող Դիլիխտան գիւղում պարսից լիազօր Միրզա-Արդուլ-Հասանի (քիչ առաջ Անգլիայում զեսպան էր) և ուուաց դլաւարի հրամանատար գեներալ Ռտիչչեկի միջև կնքում է Գիւղտանի դաշնադրութիւնը, որով «ընդմիշտ» Ռուսաստանին են անցնում Ղարաբաղի, Դանձակի, Շէքի, Շիրվանի, Շերբենդի, Ղուրայի, Բագուրի, Թալիչի խանութիւնները: Պարսկաստանը ճանաչում է ուուապատկան և Դաղստանը, Վրաստանը, Շօրագեալը և Կովկասեան զինքը Ռուսական գրօշակը պէտք է տիրապետէ Կասպից ծովում, և ոչ մի սիտութիւն, նոյն իսկ Պաշտկաստանը ոչ մը պատերազմական նաև չպէտք է ունենայ այդ ծովում, բացի Ռուսաստանից¹⁾: Այս դաշնադրութիւնը ուուաց կայսրը հաստատում է 1814 թ. մայիսի 21-ին:]

Որպէս վերջարան հետաքրքիր է իմանալ, թէ ինչ եղան Ղարաբաղի մելիքութիւնները: Ինչպէս տեսանք, Ղարաբաղի մելիքները մի խոշոր սիսալ գործեցին, իրենց կալուածները և հպատակների մեծ մասը թողնելով և հպատակների մի մասով այս ու այն կողմ գաղթելով: Գաղթական մելիքներն իրենց հպատակներով տեղաւորուել էին մեծ մասամբ Վրաստանում: Ղարաբաղից ժողովուրդը գաղթել էր նոյնպէս Շամախու կողմերը և ուրիշ տեղեր, Մելիքներից ումանք շուտով զգացին իրենց գործած սիսալը Վրաստանում մեծամեծ դժուարութիւնների հանդիպելով, միւս կողմից տեսնելով՝ որ հայրենիքից գուրս նրանց իշխանութիւնը հիմք չունի, զնում են հայրենիք վերադառնալ: Ղարանդայի Մելիք-Զումչուզը, որ ստացել էր Լոռին, 1805 թ. Լոռին վաճառեց ուումների վրայ և իւր հպատակներով նորից Վարանդա վերադառնալ, տիրանալով իւր

1) Кавказский сборникъ т. XXI.

նախկին կալուածքներին և հպատակներին, Գիւլիստանի Մելիք-Բէկլարեանները նոյնպէս գաղթեցին իրենց հպատակներով վրաստանից (1809թ.) և վերադարձան Գիւլստան Նրանց բացակայութեան ժամանակ Գիւլստանն անցել էր Իրրահիմ խանին, բայց Մելիք-Բէկլարեանները նորից նրան տիրապետեցին: Մնացած երեք մելիքութիւնները (Տիզակի, Զրաբերդի և Խաչէնի) համարես թէ ոչնչացել էին: Այդ մելիքութիւններին տիրացել էր Իրրահիմ խանը, որը զանազան հնարներով ձգտում է այդ մելիքութիւնների ժառանգներին ոչնչացնել: Այսպէս նա իսպառ ոչնչազնում է Տիզակի մելիքների սերութը: Խաչէնի մելիքներն էլ միայն անունով էին, դրանց տոհմի մելիքութիւնն էլ վերջացաւ 1728թ.: Զրաբերդի Մելիք-Խարայէլեան մելիքների ժառանգները գաղթել էին Գանձակ, երկիրն անսէր թողնելով: Մեհսիբ Կուլի խանը Զրաբերդի մելիքութիւնը յանձնում է ոռուաց ծառայութեան մէջ անուն հանած վանի իւղրաշուն (Աթարէկեան), որը մօտ 42 տարի վարում է Զրաբերդի մելիքի պաշտօնը († 1854թ.):

Թէ ինչպէս վերաբերութեցին ոռուանները մելիքներին, ինչպէս վարձատրեցին, այդ մասին կիսուուի աշխատութեանս երկրորդ մասում:

Այս բոլորից յետոյ կարեոր է ծանօթանալ Ղարաբաղի խանութեան ներքին պայմանների հետ: Ղարաբաղի խանութիւնը Անդրկովկասի ամենաընդարձակ խանութիւններից մէկն էր: Նա ունէր մօտաւորապէս 60 հազար տուն: Այդ խանութիւնը, տեսանք, առաջ եկաւ Զուանշիրցիների առաջնորդ Փանահ խանի ջանքերով: Անտանապէս այդ խանութիւնը մի վասալական իշխանութիւն էր, ճանաչում էր պարափակ շահի գերի, Խանութիւնը, պարսից տիրապետութեան մի մասն էր կազմում: Այդ պէտք է արտայայտուէր պարսից տէրութեան վճարելիք հարկով և պատերազմների ժամանակ ամեն տեսակ զիւրութիւններ, աջակցութիւն ցոյց տալով: Բայց Ղարաբաղի խանութիւնը միշտ չէր կատարում իւր պարտաւորութիւնները զէպի պարսից պետութիւնը: Շատ յաճախ Ղարաբաղի խանները իրենց զէնքը զարձնում էին պարսից շահների զէմ:

Ղարաբաղի խանութիւնը պարսից և Ղարաբաղի ժողովրդից նկատում էր որպէս պետական մի պաշտօն, խանը պարսից կառավարութեան կողմից նշանակուած մի կառավարիչ էր համարում: Սկզբում մանաւանդ, երբ Ղարաբաղում թուրք ազգաբնակութիւն քիչ կար, մելիքներն էլ զնու անկախ, ինքնուրոյն էին, Փանահ խանը տիրապետական մեծ իրաւունքներ չունէր: Նա միայն իւր ջուանշիրցիների և թուրք ազգարնակութեան վրայ էր իշխում: Բայց նուշուայ բերդից և շրջակաբերդից նա Ղարաբաղում ոչ մի այլ կտոր հող չունէր: Ըստ Ռաֆֆու նա իւր տրհմային գերեզմանատան գետինն

անդամ գնել է Արչէնի Հասան-Զալալեաններից (Աղջամը): Իրարակիմ խանը նոյնպէս կալուածներ չունէր Ղարաբաղում, նա իւրժառանդների և եղբայրների ապրուստն ապահովելու համար, Ղարաբաղից դուրս Բարդայի կողմերը նուխու բէկերից հողեր էր գնել⁽¹⁾։ Այնպէս որ Ղարաբաղի խաները կալուածտէր, սեփականատէր չէին, այլ միայն կառավարիչներ երանք ժողովրդից կամ ենթակայ մելիքներից հարկեր էին առնում, որոնց մի մասը պէտք է պարսից շահին ուղարկէին, իսկ մնացածն իրենց օգտին էր։

Ղարաբաղում երկրի իսկական տէրերն էին մելիքները, Բայց սրանց կալուածտէրական իրաւունքներն էլ սահմանափակուած էին: Մելիքները կամ մելիքական տան պատկանողներն ունէին իրենց տոհմային ժառանդական կամ այլ և այլ միջոցներով ձեռք բերած կալուածները, որոնց կատարեալ տէրն էին: Իսկ զիւղացիների ձեռքում գտնուած հողերի վրայ սեփականութեան իրաւունք չունէին: Այդ հողերը պատկանում էին զիւղի ամբողջ համայնքին, բայց բաժանուած էին բնտանիքների մէջ: Մելիքը համարում էր զիւղապետը, զիւղից որոշ եկամուսներ, օգուաններ էր ստանում, բայց իրաւունք չունէր խանութելու զիւղացիների հողային խնդիրների մէջ, նա չէր կարող մէկի հողը խլել, մի ուրիշին տալ, կամ ինքը նոյն իսկ ժամանակաւորապէս վերպնել և յանել: Նոյնը կարելի է առել և վանքապատկան զիւղների մասին, վանքերը ստանում էին այդ զիւղներից միայն որոշ եկամուսներ, իսկ հողը դարձեալ զիւղական համայնքների սեփականութիւնն էր կազմում։

Ղարաբաղի խաները մելիքներին արտաքսելով կամ ոչնչացնելով՝ տիրանում էին Նըմանց հողերին, այն էլ դարձեալ ոչ մշտապէս, այլ օգտուելու իրաւունքով: Ինչ վերաբերում է զիւղական հողերին, նրանք երբէք ձեռք չեն տուել, յարգել են երկրի կարգերը: Երանք միայն որոշ եկամուսներ են առել և դրանով բաւականացել, Մելիքների բացակայութեան և ժողովրդի հեռանալու պատճառով, խանները իրենց սեփականեցրել են դրանց հողերից օգտուելու իրաւունքը, իսկ երբ տէրերը վերագարձել են, նորից յետ են առել: Այսուելից արդէն պարզ երեսում է, որ խանները կալուածական իրաւունքներ չունէին, նրանք ժողովրդից միայն որոշ առորդերներ, օգուաններ էին ստանում։

Ղարաբաղի խանութիւնը բաժանուած էր մի քանի մահաների: Մահաների կառավարութիւնը յանձնուած էր բէկերին, մելիքներին և նայիբներին, Սրանք նշանակւում էին խանից: Բէկերը, մելիքները նայիբները լսու մեծի մասին խանի ազգականներից, երկրի հին իշխանական տօնմերից կամ չէ խանի պալատականնե-

(1) Բաֆֆի. Խամսայի մելիքը թիւնները եր. 246:

րից էին նշանակելում՝ Սրանց ջառայութիւնը ժամանակաւոր էր, ամենաշատը՝ մինչև մահը, խաները դէպի այս պաշտօնեաները մեծ կամայականութիւններ էին ցոյց տալիս, կարճ ժամանակով էին նշանակում, երբեմն մեծ պատիւների էին արժանացնում, իսկ երբեմն էլ ամեն ինչից զրկում, նոյն իսկ մարմնական պատիժների ենթարկում. Այս իսկ պատճառով սրանց գրութիւնը չափ անհաստատ էր Այս պաշտօնեաներն ի նկատի առնելով իրենց կարճատև իշխանութիւնը, ձգտում էին շուր հարատանալ, կեղեքել ժողովրդին Մահարների բէկերի, մելիքների և նայիբների իրաւունքներն էին.

1. Գիւղերի վրայ բաժանել մի շաբթ պարտաւորութիւններ, որոնց չափն ամբողջ մահալի համար որոշում էր խանը:

2. Ժողովրդին ստիպել ժամանակին և լրիւ վճարել հարկերը:

3. Պաշտովանել մահանդերը աւագակիներից:

4. Քննել, զատել զիւղացիների և գիւղերի միմևանց մէջ ուշ նեցած վէճները:

5. Դատական վճիռներն ի կատար ածել:

6. Ծիսնել այն զործերի դատերը, որնք գուրս են կրօնական դատավարութիւնից (Հնազանդուելը, տուքերից, պարտաւորութիւններից խուսափելը, զողութիւնները և այլն):

7. Որունել, ձերքակալել և զատի յանձնել աւագակիներին և այլ վնասակար յանցաւորներին:

Գիւղերը կառավարում էին խանից նշանակուած կամ երբեմն զիւղականներից ընտրուած գիւղական տանուտէրերը (խւրացներ, մելիքներ, քեօվիաններ), Սրանք երբեմն նշանակում էին բէկերից:

Թէ բէկերը, մելիքները, նայիբները և թէ տանուտէրները իրենց ծառայութիւնների համար խանից ուսձիկ չէին սասնումն նրանք ծառայութեան փոխարէն խանից առանձին հրովարտակիներով (թալիկ է) ստանում էին գիւղերի եկամուտների մի մասը, անրնակ հողեր, որոնց վրայ կարող էին անհոգ զիւղացիներ ընակեցնել և նրանցից շահուել: Այս վարձասորութիւնը սրանց արում էր պաշտօնավարութեան ընթացքում, երբեմն ցկեանս, բայց երբեմն ժառանգարար ժառանգել կարելի է բէկի, մելիքի և այլն տիտղոսը, իսկ իրաւութենքը՝ ոչ եթէ հօրը յաջորդում էր որդին նոյն պաշտօնը ստանձնելով, այդ լինում էր ամեն անդամ խանի յատուկ հրովարտակով: Այդ բէկերը կամ ազաները (խանի ազգականները) կարող էին ունենալ իրենց մասնաւոր, տոհմային կամ զանազան միջոցներով ձեռք բերուած կալուեածքները, բայց երբէք իրաւունք չունէին սեփականացնելու այն գիւղերը, որոնց վրայ կառավարիչ էին նշանակուած: Նրանք տէր էին միայն որոշ եկամուտների, այն էլ ժամանակաւորական:

Պաշտօնեաների դասին էին պատկանում և սուլթանները, մինրաշինները, իւզբաշինները և մասավերը։ Սուլթանները թափառականների կառավարիչներն էին և նոյն իրաւոնքներն ունէին, ինչ որ թէկերը։ Մինրաշինները զօրքի գլխաւորներն էին, ինչպէս և իւզբաշինները։ Սրանց էլ թէկերի նման, որպէս վարձատրութիւն, արուած էին գիւղերի եկամուտներից որոշ մասու Մասավերը կատարում էին զինւորական պարտաւորութիւններ։ Վտանգի դէպքում սրանք ամենից շուա պէտք է ժողովուէին։ Զէնքերը, ձիանները իւրենցից էր, բայց փոխարէնն ազատ էին հարկերից և տուրքերից։ Խաղաղ ժամանակ մասավերը ծառայում էին որպէս խանի թղթաշապաններ, ժանդարմններ, թիկնապահներ և այլն։ Այս դէպքում ստանում էին նուէրներ և վարձատրութիւն։ Խանի միւս զօրքը կազմուած էր թէկերի հպատակներից ժողոված կուոզներից, որոնց զինում էին թէկերը իրենց հաշով։ Սրանք կարճ ժամանակով էին ժողովում և վարձատրում էին աւարով կամ հարկերից ժամանակաւորապէս ազատուում էին։ Ղարաբաղի խանը կարող էր ամենաշատը 5000 կուոզ զէնքի կանչել։

Գիւղացիութիւնը Ղարաբաղի խանութեան մէջ բաժանուում էր երկու կարդի՝ ուսամթներ և ուշագարներ։ Ռահամթները սեփական հող, անտեսութիւն ունէին, իսկ ուշագարները զուրկ էին թէ անփական հողից և թէ տնտեսութիւնից։ Բայց երկուսն էլ անձնապէս ազատ էին, որու չէին համարուում։ Ռահամթները բաժանուում էին և կարգի, 1. Ռահամթներ, որոնք ապրում էին իրենց սեփական հողերի վրայ, որոնց ձեռք էին բերել ժառանգութեամբ, զնելով կամ այլ միջոցներով։ Սրանք հողի համար ոչինչ չէին վճարում, միայն տալիս էին պետական հարկ, այն է իրենց արդիւնքների (*զիխաւորապէս հնձի*) $\frac{1}{10}$ -ը։ 2. Ռահամթներ, որոնք ապրում են ոչ սեփական, այլ կալուածատէրերի հողերի վրայ և համարում են ժառանգական կապալառուներ։ Սրանք վճարում են պետութեան հնձի $\frac{1}{10}$ -ը, իսկ հողատիրոջ էլի հնձի $\frac{1}{10}$ -ը։ 3. Ռահամթներ, որոնք ապրում են իրենց սեփական հողերի վրայ, բայց գտնուելով այնպիսի գիւղերում, որոնց եկամուտները խանի կողմից արուած են թէկերի կամ զանազան անձանց, սրանք բացի պետական հարկից պարտաւոր են զէպի թէկը կամ զիւղի եկամտաաէրը մի քանի ծառայութիւններ յանձն առնելու։ 4. Թափառական ուսամթներ, որոնք զուրկ էին մեծ մասամբ սեփական արօտատեղիներից և իրենց անտառներն արածացնելու համար վճարում էին խանին կամ թէկին որոշ տուրք՝ օգտուելով նրանց արօտատեղիներից։

Ռաշագարները հողազուրկ էին։ Սրանք բաս մնձի մասին օտար, գաղթական զիւղացիներ էին, որոնց հողատէրերը, խանները, թէկերը զէպի իրենց էին զրաւում։ Սրանց տալիս էին անատեղ, նոյն

իսկ պատրաստի տուն, անասուններ, գործիքներ, սերմացան, նոյնահանդիպութիւնները այս բոլորը ստանալով մշակում էին հողատէրների գաշտեր և այզինները. Արդիւնքը պատկանում էր հողատիրոջ, միայն ուշպարին մի որոշ մաս էր հանուում, գլխաւորապէս հնձի $\frac{1}{4} - \frac{1}{2}$ -ը. Եթէ ուշպարը չէր ուզում մնալ իւր հողատիրոջ մօտ, որոշ ժամանակ լրանալուց յիտոյ կարող էր թողնել նրան, Սկզբում ուշպարների թիւը շատ չնշին էր, մեծամասնութիւնը կազմում էին սահմաթները: Բայց պատերազմների, գաղթականութիւնների չնորհիւ աւելացաւ հետզնետէ ուշպարների թիւը¹⁾.

Դատավարութիւնը Դարաբաղի խանութեան մէջ բաւական պարզ էր: Կային երկու տեսակ դատարաններ՝ հոգեոր և աշխարհական: Հոգեոր դատարանն առաջնորդւում էր գլխաւորաբար Դուրանով և շարիաթով: Դատաւորները կէս կրօնաւոր կէս աշխարհական էին, կոչում էին զազի, որոնք ընտրում էին հոգեորականների կողմից և հաստատում իսանից: Երբեմն զազին միայնակ էր դատում, զազին գործերը վճռում էր ափունդների և էֆֆենդինների (հոգեոր և զիտական աստիճաններ էին) հետ խորհրադկցելով կամ նրանց մասնակցութեամբ: Այս հոգեոր դատարանի իրաւասութեան տակ էին քաջաքացիական բոլոր գործերը, նոուարական և խնամակալական, քրէական (մասնաւոր մտքով) և այլ գործեր: Աշխարհական դատարանները գտնում էին բէկերի, աղանների ձեռքում, այդտեղ զնուում էին գողութեան, յափշտակութեան, կենդիքի, դաւաճանութեան, զինուրական, և այլ գործեր ու յանցանքներ: Խոկ կնճռոտ, ծանր, ինչպէս և ամեն տեսակ դատեր վարում էր և ինքը խանը, յաճախ խորհրդակցելով ախունդների, էֆֆենդինների հետ Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ տեղային օրէնքները, սովորութիւնները յարգւում էին, քիչ դէպքեր են սղել, երբ խանները ժողովրդի վերաբերմամբ գոնէ այդ խախտել են:

Դարաբաղի խանութիւնը, ինչպէս յիշուեց, Անդրկովկասի ամենասեծ խանութիւնն էր: Նա ընկնում էր կուրի և Արաբսի մէջ տեղը, Գանձակի և Շէքիի խանութիւններից զէպի հարաւ: Երասահմաններն էին՝ արևմուտքից Երևանի և Նախիջևանի խանութիւնները, հիւսիսից Շէքիի ու Գանձակի խանութիւնները, արևելքից Շիրվանի, մասամբ Շէքիի խանութիւններն, իսկ հարաւից Արաբատական և Արաբս գետը: Ամբողջ տարածութիւնն էր ընդամէնը

1) Բէկերի, աղանների եւ զիտացինների մասին տե՛ս Ակտե կավազ-սկаго археографический комиссии т. VIII եր. 469, իսկ Դարաբաղի խանութեան ներքին կեանքի մասին ընդհանրապէս В. Н. Иваненко. Гражданское управление Закавказьемъ т. I եր. 449—447.

15925 քառակուսի վերասու Առաջ ուշնիցնել է մատ 60 հազար ընտանիք, իսկ 1833 թ. արած մի վիճակագրութեամբ ծխերի թիւն էր 20546, իսկ աղամարդկանց թիւը 54841, ուրիմ մատաւորապէս ունէր 100000 մասկիչ Գիւղերի թիւն էր մատ 7411⁽¹⁾) Ըստ այս նոյն վիճակագրութեան հայերը կազմում էին աղգարնակութեան 4/5-ը, քրդերը՝ 1/7-ը, իսկ մնացածը կազմում էին թուրքերը Պաշտօնեաներն և ընդհանրապէս արտօնեալները կազմում էին մատ 1190 ընտանիք (20456 ընտանիքից), հոգևորականներից կային 2 զազիներ, 7 էֆինդիներ և ախոնդներ և 150 մոլլաներ, Ղարաղի խանութիւնը իւր դոյութիւնը շարունակեց մինչև 1822 թուականը, նա ունեցաւ մատաւորապէս 75 տարուայ գոյութիւն, եթէ նրա սկզբն ընդունենք 1747 թուականը, 1822 թ. նորեմբերի 21-ին Ղարաբաղի Մեհատի-Դուլի խանը փախչերով Պարսկաստան, Ղարաբաղի խանութիւնն այդ օրուանից միացուեց Խուսաց պետութեան:

Հ. Մուսայիկիան

ՆՈՐ ՂԻՑԱԿԱՆ ԳԻՒԾ ՔՐԴԱՑԱՆՈՒՄ

Պրօֆեսոր Մ. Խոստովը Բերլինից «Русскія Вѣдомости» թերթին ուղարկում է այս վերնագրով «Աշակերտ մի յօդուած՝ որ Հնագիտական տեսակէտից հետաքրքրական լինելով թարգմանաբար բերում ենք այստեղ, «Հնագոյն քրիստոնէութեան յայտնի պատմաբան պրօֆեսոր Դէյոմանը այս օրերս Բերլինի Հնագիտական Բնկերութեան մէջ արաւնախնական հաղորդագրութիւն այն շափազանց հետաքրքրական գիւտի մասին՝ որ մօտիկ անցեալում եղել է Քրդստանում (Քաղղատից գէպի հիւսիս): Տեղացի գիւղացիներն այստեղ գտել են մի կաւէ անօթ, որի մէջ եղել է երեք գալարածոյ (պատմատած) մագաղաթ: Նրանք իրենց գիւտը յանձնել են Պարսից մի բժշկի, որը վաճառել է (կամ գուցէ ընծայել է) այդ մագաղաթները մի անգիւացու, վերջինս էլ ուղարկել է Քեմբրիճ, որտեղ և այժմ գտնւում են այդ մագաղաթները: Այդ գալարածոյ մագաղաթներն եղել են փաստագրեր ժառանգական հողային կապալի: Փաստագրե-

1) Обозрение русскихъ владѣній за Кавказомъ, часть III
1836 г.